



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Բ Ը

Ս. Լ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻՆ «ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ» 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ո ր ո շ ու մ ե մ.

Պետական կառավարման համակարգում երկարամյա բարեխիղճ գործունեության համար Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ստեփան Լևոնի ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻՆ պարգևատրել «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Ռ Ա Գ Ա Հ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2015թ. դեկտեմբերի 28
Երևան
ՆՀ- 847 -Ա

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍԵՐ

03.11.2015թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Լ.Պետրոսյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա.Ավագյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ձև 1, Ձև 17, Ձև 51 (տարեկան) և Ձև 85 (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 86, թիվ 91 և թիվ 104 արձանագրային որոշումները և 2013 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 61-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» և «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ձև 13, Ձև 16 և Ձև 17-Ա (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին հավանություն տալու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

Որոշեցին՝

1. Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Բժշկական հաստատությունների գործունեության մասին» Ձև 1 (տարեկան), «Բժշկական հաստատությունների կադրային ներուժի մասին» Ձև 17 (տարեկան), «Դատաբժշկական փորձաքննության մասին» Ձև 51 (տարեկան), «Արձանագրված վարակիչ հիվանդությունների, սննդային, քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների վերաբերյալ» Ձև 85 (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին,

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հաշվետվության ձևերը ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատվելուց և սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002թ. հոկտեմբերի 18-ի թիվ 86, թիվ 91, թիվ 104 արձանագրային որոշումները և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013թ. հոկտեմբերի 28-ի թիվ 61-Ա որոշումը,

3. Ինչպես նաև հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Յողի անբավարարությամբ պայմանավորված վահանաձև գեղձի հիվանդությունները» Ձև 13 (տարեկան), «Դեղատների կադրային ներուժի և գործունեության մասին» Ձև 16 (տարեկան) և «Առողջապահության համակարգի պետական և մարզային ապարատի, տեսչությունների, գիտահետազոտական ինստիտուտների, բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կադրային ներուժի մասին» Ձև 17-Ա (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևին:

/Անհատական/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Նորվեգիայի Օսլո քաղաքում 2015թ.հոկտեմբերի 5-ից 6-ը Նորվեգիայի վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված որակի կառավարման գծով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան, Գ. Անանյան, Ա. Հայրապետյան/

2.2. Հաղորդում՝ Ղազախստանի Հանրապետության Ոստ-Կամենոգորսկ քաղաքում 2015թ. հոկտեմբերի 12-ից 13-ը Ղազախստանի ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից կազմակերպված «ԱրմենիաԻնֆո» տեղեկատվական համակարգի ներդրման Հայաստանի փորձը ներկայացնելու և արևելյան Ղազախստանի մարզի համար «ԴևԻնֆո» տեղեկատվական համակարգի մշակման ու ներդրման ուղղությամբ տեխնիկական աջակցություն ցուցաբերելու համար նախատեսված հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Վ. Դավթյան, Ա. Մարտիրոսյան, Կ. Եսայան /

2.3. Հաղորդում՝ Տաջիկստանի Հանրապետության Դուշանբե քաղաքում 2015թ. հոկտեմբերի 13-ից 15-ը ԱՊՀ Միջպետական կոմիտեի կողմից կազմակերպված «Գյուղատնտեսական և գյուղական վիճակագրության կատարելագործման գլոբալ ռազմավարություն» խորագրով խորհրդակցություն և ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 54-րդ նիստին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան, Ա. Ավագյան /

2.4. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2015թ. հոկտեմբերի 14-ից 15-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության /ՏՀԶԿ/ կողմից կազմակերպված Բնապահպանական տնտեսական հաշիվների համակարգի /ԲՏՀՀ/ ներդրմանը նվիրված սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

2.5. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկ քաղաքում 2015թ. հոկտեմբերի 20-ից 22-ը «Ռուսաստանի վիճակագիրների ասոցիացիայի» համա-ռուսական հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված Ռուսաստանյան վիճակագրական առաջին բաց կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Վ. Դավթյան/

2.6. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2015թ. հոկտեմբերի 21-ից 22-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

09.11.2015թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Լ.Պետրոսյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը

Նիստում լսվեցին հետևյալ հարցը.

1.«Առևտրի շրջանառության մասին» Ձև 1-առևտուր (ամսական), «Առևտրի շրջանառության մասին» Ձև 1-առևտուր (փոքր) (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու և «ՀՀ ՎՊԽ 2012 թվականի փետրվարի 20-ի թիվ 08-Ն և 07-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

Որոշեցին՝

Հաստատել «Առևտրի շրջանառության մասին» Ձև 1-առևտուր (ամսական), «Առևտրի շրջանառության մասին» Ձև 1-առևտուր (փոքր) (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն և լրացման հրահանգները՝ համաձայն հավելվածների:

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի փետրվարի 20-ի «Առևտրի շրջանառության մասին» Ձև թիվ 1-առևտուր (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 08-Ն և 07-Ն որոշումները:

Սույն որոշումներն ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

/Նորմատիվ/

13.11.2015թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Լ.Պետրոսյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Զ.Ավոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա.Անանյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ս.Զեյնալյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ջանլաթյանը:

Լսեցին՝

1.«Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» (Ձև 3-Ֆ (տարեկան)) պետական վիճակագրական հաշվետվության ձևն և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Հ.Տիփոյան/

Որոշեցին՝

հաստատել «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» (Ձև 3-Ֆ (տարեկան)) պետական վիճակագրական հաշվետվության ձևն և լրացման հրահանգը համաձայն իրենց հավելվածների:

/Նորմատիվ/

2. «2015 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների հաշվետվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Արևշատյան/

Որոշեցին՝

«2015 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008 թվականին տնային տնտեսություններում իրականացված «Աշխատուժը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում» միանվագ հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008 թվականին տնային տնտեսություններում իրականացված «Աշխատուժը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում» միանվագ հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

4. «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (ամսական), «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 30-Ն, 31-Ն, 32-Ն և 33-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին», և «Առևտրային կազմակերպություններում աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/

Որոշեցին՝

հաստատել «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (ամսական), «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգը և «Առևտրային կազմակերպություններում աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» հետազոտության հարցաթերթն ու լրացման հրահանգը, իսկ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 30-Ն, 31-Ն, 32-Ն և 33-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչել:

/Նորմատիվ/

5. «2016 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

հաստատել 2016 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

6. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

Որոշեցին՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:

/Անհատական/

7. «Հաշվետվություն էներգակիրների արտադրության, սպառման և պահուստների մասին» Ձև թիվ 1-էներգետիկա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման ցուցումը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Անանյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 43-ն որոշմամբ հաստատված հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

8. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/

Որոշեցին՝

հաստատել «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-ն որոշման մեջ առաջարկվող փոփոխությունները:

/Նորմատիվ/

9. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

9.1. Հաղորդում՝ Ավստրիայի Հանրապետության Վիեննա քաղաքում 2015թ. սեպտեմբերի 14-ից 25-ը «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկի» 6-րդ խմբագրության հիմնական առանձնահատկություններին, դրանց ներդրման հետ կապված խնդիրներին, ինչպես նաև ԱՄՀ համապատասխան անձնակազմի հետ մասնագիտական քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ. Զանլաթյան/

9.2. Հաղորդում՝ Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքում 2015թ. սեպտեմբերի 15-ից 16-ը Անկախ պետությունների համագործակցության միջպետական վիճակագրական կոմիտեի (ԱՊՀ) կողմից կազմակերպված «ԱՊՀ երիտասարդությունը. Վիճակագրական պատկեր» ժողովածուի թողարկումը և գենդերային վիճակագրության զարգացումը» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ն. Բաղդասարյան, Լ. Քալանթարյան/

9.3. Հաղորդում՝ Բելգիայի Թագավորության Բոյուսել քաղաքում 2015թ. սեպտեմբերի 21-ից 23-ը Եվրոստատի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ՄԱԿ-ի ԵՏՀ, UNECE/ վիճակագրության բաժնի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության /OECD/ հետ համատեղ կազմակերպված Բիզնես ռեգիստրների գծով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Ա.Հայրապետյան/

9.4. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2015թ. հոկտեմբերի 5-ից 6-ը Եվրահանձնաժողովի կողմից կազմակերպված Արևելյան համագործակցության վիճակագրական Պլատֆորմ-2-ի ներքո իրականացվող «Աշխատանքի շուկայի վիճակագրությունը» ծրագրի շրջանակում կայացած «Տնտեսական ինտեգրումը և մոտարկումը ԵՄ քաղաքականությանը» խորագրով խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցողներ՝ Լ. Քալանթարյան, Զ. Ավոյան, Ս. Ջեյնալյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

07.12.2015թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Ա.Սաֆյանը, Լ.Պետրոսյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան

Լսեցին՝

1.«Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգիչը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Արևշատյան/

Որոշեցին՝

- 1.Հաստատել «Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգիչը» համաձայն հավելվածի:
2. Առաջարկել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը սահմանված կարգով հաստատել «Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգիչը»:
3. «Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգիչը» կիրառել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի վիճակագրություն վարող համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքներում:

/Անհատական/

2.«2016 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք աշխատուժի ընտրանքային հետազոտության հարցաթերթը և հարցաթերթի լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/

Որոշեցին՝

հաստատել 2016 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք աշխատուժի ընտրանքային հետազոտության հարցաթերթը և հարցաթերթի լրացման հրահանգը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2008-2014 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված (SSԿԱ) հետազոտության և 2014 թվականին SSԿԱ հետազոտությանը կից իրականացված «Երեխաների կարիքները» մոդուլային հետազոտության անվանազերծված տվյալների բազաները ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության 2008-2014 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված (SSԿԱ) հետազոտության և 2014 թվականին SSԿԱ հետազոտությանը կից իրականացված «Երեխաների կարիքները» մոդուլային հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2014 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Համաշխարհային Բանկի աղքատության և հավասարության ոլորտի գործառնական խմբի տնտեսագետ Մորից Մեյերին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Համաշխարհային բանկի աղքատության և հավասարության ոլորտի գործառնական խմբի տնտեսագետ Մորից Մեյերին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2014 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

5. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2014 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված (SSԿԱ) հետազոտության և 2014 թվականին SSԿԱ հետազոտությանը կից իրականացված «Երեխաների կարիքները» մոդուլային հետազոտության անվանազերծված տվյալների բազաները ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի Մոնիթորինգի և գնահատման/ Երեխաների իրավունքների համակարգերի մոնիթորինգի բաժնի ղեկավար/ փորձագետ Լուսինե Երեմյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի Մոնիթորինգի և գնահատման/Երեխաների իրավունքների համակարգերի մոնիթորինգի բաժնի ղեկավար/ փորձագետ Լուսինե Երեմյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2014 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված (SSԿԱ) հետազոտության և 2014 թվականին SSԿԱ հետազոտությանը կից իրականացված «Երեխաների կարիքները» մոդուլային հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

23.12.2015թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն.Մուշեղյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Զ.Ավոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ.Մարտիրոսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն.Աստվածատուրովան,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ.Հակոբյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ.Խաչատրյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի առաջին կարգի մասնագետ Ս.Մովսիսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի առաջին կարգի մասնագետ Ն. Բաբոյանը,

Լսեցին՝

1.«2016 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշեցին՝

հաստատել «2016 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

Լսեցին՝

2.«Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին Ձև 1-SS (ամսական) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

Որոշեցին՝

հաստատել «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը համաձայն հավելված 1-ի և 2-ի:

/Անհատական/

3.«Արդյունաբերական արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների (9-նիշ մակարդակով) դասակարգիչը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Արևշատյան/

Որոշեցին՝

հաստատել «Արդյունաբերական արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների (9-նիշ մակարդակով)» դասակարգչը համաձայն հավելվածի և այն կիրառել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի վիճակագրություն վարող համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքներում:

/Անհատական/

4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ տողի «428910.7» թիվը փոխարինել «441376.6» թվով, 4-րդ տողի «84609.9» թիվը փոխարինել «84717.4» թվով, ընդամենը տողի «644190.0» թիվը փոխարինել «656763.4» թվով:

/Անհատական/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1. Հաղորդում՝ Թուրքիայի Հանրապետության Ստամբուլ քաղաքում 2015 թվականի սեպտեմբերի 15-ից 18-ը «Կենսական վիճակագրական համակարգի սկզբունքների և առաջարկությունների կիրառությունը Ասիայում Քաղաքացիական գրանցումների և կենսական վիճակագրության (ՔԳԿՎ) գործողությունների տարածաշրջանային ծրագրի

իրականացում» խորագրով ենթատարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/

5.2. Հաղորդում՝ Ֆրանսիայի Հանրապետության Փարիզ քաղաքում 2015 թվականի նոյեմբերի 2-ից 13-ը Ֆրանսիայի Ժողովրդագրական հետազոտությունների ազգային ինստիտուտի (INED) «Մահացության պատճառները Կովկասում և Կենտրոնական Ասիայում» ծրագրի՝ փոխադարձ համագործակցության շրջանակում իրականացվող ուսումնասիրության համատեքստում՝ ՀՀ բնակչության մահացության և դրա պատճառական կառուցվածքի (հիվանդությունների միջազգային դասակարգչի (ICD) 8-րդ, 9-րդ և 10-րդ վերանայումներով) վերաբերյալ ցուցանիշների համադրման նկատառումով վերահաշվարկի, մահացության միտումների գնահատման և համեմատական վերլուծությունների (Հայաստանի և Վրաստանի համանուն ցուցանիշների) վերաբերյալ գործնական աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/

5.3. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2015 թվականի նոյեմբերի 18-ին ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի վիճակագրական բաժանմունքի (UNECE/ՄԱԿ ԵՏՀ) կողմից կազմակերպված «Ակտիվ ծերացման վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներում առկա հիմնախնդիրների բացահայտում» խորագրով աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/

5.4. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2015 թվականի սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 10-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Մարդահամարների ու կացարանների համատարած հաշվառման» փորձագետների խմբի աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան/

5.5. Հաղորդում՝ Բելոռուսի Հանրապետության Մինսկ քաղաքում 2015 թվականի հոկտեմբերի 20-ից 22-ը Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA), ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Նորվեգիայի վիճակագրության կողմից համատեղ կազմակերպված «Բնապահպանական-տնտեսական հաշիվների հաշվառման կետրոնական հիմունքներ և էներգետիկ հաշիվներ» խորագրով ուսումնական այցելությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Հ. Հակոբյան, Ս.Մովսիսյան /

5.6. Հաղորդում՝ Խորվաթիայի Հանրապետության Զագրեբ քաղաքում 2015 թվականի նոյեմբերի 2-ից 5-ը «Էներգետիկ հաշվեկշիռների կազմման վերաբերյալ Ինոգեյթ տարածաշրջանային սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ա.Անանյան, Հ. Հակոբյան /

5.7. Հաղորդում՝ Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում 2015 թվականի նոյեմբերի 17-ից 18-ը Ինոգեյթ ծրագրի տեխնիկական քարտուղարության կողմից կազմակերպված «Ինոգեյթ ծրագրի էներգետիկ վիճակագրության ցանցի» վերաբերյալ աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ. Հակոբյան/

5.8. Հաղորդում՝ Մոլդովայի Հանրապետության Քիշնև քաղաքում 2015 թվականի նոյեմբերի 3-ից 4-ը ՄԱԿ-ի Եվրասիանձնաժողովի կողմից կազմակերպված «Ըստ սեռերի վիճակագրության տարածումը» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Դ. Մարտիրոսովա, Զ. Ավոյան /

5.9. Հաղորդում՝ Նիդեռլանդների Թագավորության Հաագա քաղաքում 2015 թվականի նոյեմբերի 9-ից 18-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրաստատ) հրավերով «Ազգային հաշիվները գործողության մեջ» խորագրով մոդուլ դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Լ. Խաչատրյան, Ն. Աստվածատուրովա, Ն. Բաբոյան/

5.10. Հաղորդում՝ Ալբանիայի Հանրապետության Տիրանա քաղաքում 2015 թվականի նոյեմբերի 17-ից 19-ը «Արդյունքների համար վիճակագրական տվյալների տարածումը» խորագրով տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Վ.Դավթյան/

5.11. Հաղորդում՝ Ֆրանսիայի Հանրապետության Փարիզ քաղաքում 2015 թվականի նոյեմբերի 18-ից 19-ը Արևելյան գործընկերության Պլատֆորմ II-ի 2014-2017թթ. աշխատանքային ծրագրի շրջանակում կազմակերպված «Աշխատանքի շուկայում պահանջարկի սպասումների կանխատեսումը և առաջարկի հետ համապատասխանեցումն Արևելյան համագործակցության երկրներում. աշխատանքի շուկայի և մասնագիտական հմտությունների օբսերվատորիաներ» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/

5.12. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2015 թվականի նոյեմբերի 25-ից 27-ը Միավորված Ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) վիճակագրության ինստիտուտի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների ինստիտուտի կողմից կազմակերպված «Վիճակագրական ցուցանիշների միջազգային համակարգի կարողությունների ձևավորումը, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ներդրումը կրթության վիճակագրության ոլորտում» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ն.Քաղդասարյան/

5.13. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2015 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 4-ը Միջազգային համադրումների ծրագրի շրջանակում, ԱՊՀ երկրների սպառողական ապրանք-ներկայացուցիչների գնային տեղեկատվության ստուգման ու համաձայնեցման նպատակով կազմակերպված աշխատանքային խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսյան/

5.14. Հաղորդում՝ Ղրղզստանի Հանրապետության Բիշքեկ քաղաքում 2015 թվականի դեկտեմբերի 1-ից 4-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի և Ղրղզստանի ազգային վիճակագրական կոմիտեի կողմից համատեղ կազմակերպված Վիճակագրության գծով աշխատանքային խմբի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/